

Հակառակ բոլոր խոչընդոտներուն,
 քարոզիչները, ըստ կարելւոյն կը շարու-
 նակեն իրենց առաքելութիւնը. «Անոնք,
 կ'ըսէ ճանապարհորդ գիտնական Դուռնը-
 Ֆոր, հիացում կը պատճառեն իրենց գի-
 տութեամբ, իրենց եռանդով և իրենց ա-
 ռատածեղնութեամբ. սակայն հերձուածող-
 ներն իրենց դրամով կը քանդեն ինչ որ
 այս առաքելաջան մարդիկը ամբօրէն կը
 հաստատեն: Ամենէն աւելի ծաղկեալ առա-
 քելութիւններն ալ ի վերջոյ փուլ պիտի
 գան եթէ Աստուած չփոխէ հերձուածող-
 ներուն սրտերը: Այս թշուառականները՝
 որոնք ամենէն աւելի կ'երկնչին մեր քա-
 հանաներուն սուրբ յառաջդիմութենէն, կը
 գրգռեն պետական իշխանութիւնները
 և շարունակ զանոնք կը համոզեն՝ թէ որ-
 չափ վտանգաւոր պիտի ըլլար թոյլ տալ
 որ լատինները բազմանային իրենց մէջ,
 թէ կառավարութեան հանդէպ այս չարա-
 կամ մարդիկը՝ փարած են Պապին և քրիս-
 տոնեայ իշխաններուն, թէ պէտք է զանոնք
 նկատել իբրև նոյնքան լրտեսներ, որոնք
 կրօնքի պատրուակին ներքև կու գան
 ճանչնալու համար երկրին ուժերը, թէ ի-
 րենց ծէսին հետեւողներուն կը ներշնչեն
 սոսկ ապստամբութեան հոգին, թէ Եւրո-
 պայի ամենէն հզօր իշխաններն ալ պիտի
 չզբաղէին անոնցմով, եթէ զանոնք չգոր-
 ծածէին իբրև նոյնքան գործակալներ, ա-
 տակ՝ տարածելու օր մը իրենց աշխարհա-